



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«29» 03 2018թ.

No 06/3-1/15948-18

Ձեր No _____

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ
ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ
ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԿ-Ի ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՓՈՔՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ-ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ Ռ. ՄԱՇԱԴՅԱՆԻՆ

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՊԱՐՈՆ Վ. ՍԻՍԱԿՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 26.02.2018 թվականի
թիվ Պ-15 գրության

Հարգելի պարոն Համբարձումյան

Հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասը և 307-րդ
հոդվածը, իրազեկման կարգով հայտնում ենք հետևյալը:

ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 5-րդ կետերին
համապատասխան՝

- հարկային տարվա ընթացքում որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված
ֆիզիկական անձը շրջանառության հարկ վճարող է համարվում որպես անհատ
ձեռնարկատեր հաշվառման օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը
(բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա
ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե մինչև որպես անհատ
ձեռնարկատեր հաշվառման օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկային մարմին
է ներկայացնում հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն՝
շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ,

- մինչև հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ գործունեություն չիրականացրած (գործունեությունը դադարեցրած) անհատ ձեռնարկատերը գործունեությունը վերսկսելու օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի) կարող է համարվել շրջանառության հարկ վճարող, եթե մինչև գործունեությունը վերսկսելու օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկային մարմին ներկայացնի հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ նոր հաշվառված անհատ ձեռնարկատիրոջ համար շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարության ներկայացման վերջնաժամկետը սահմանված է որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման օրվանից մինչև այդ օրվան հաջորդող 20-րդ օրը: Միաժամանակ, ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված դրույթը վերաբերում է մինչև հարկային տարվա հունվարի 1-ը իսկ հարկային տարում նոր ստեղծված հարկ վճարողների դեպքում՝ պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրը գործունեությունը դադարեցրած և մինչև հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ գործունեություն չիրականացրած հարկ վճարողներին: Հետևաբար, գրությամբ նկարագրված դեպքում 02.02.2018թ. նոր հաշվառված և նույն օրը գործունեությունը դադարեցրած անհատ ձեռնարկատերը 20.02.2018թ. հետո գործունեությունը վերսկսելու դեպքում կարող է համարվել շրջանառության հարկ վճարող, եթե մինչև գործունեությունը վերսկսելու օրվան հաջորդող 20-րդ օրը (տվյալ դեպքում) ներառյալ հարկային մարմին ներկայացնի շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

Հարգանքով՝



Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ